«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 4

7 մարտի 2019 թվականի

Գիտական խորհրդի 2016 թվականի հունիսի 22-ի նիստում (արձանագրություն N 9) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում» փոփոխություններ կատարելու մասին

Լսելով և քննարկելով **«Գիտական խորհրդի 2016 թվականի հունիսի 22-ի նիստում (արձանագրություն N 9) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում» փոփոխություններ կատարելու մասին»** հարցը (զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Պ.Ա.Քալանթարյան)՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Գիտական խորհրդի 2016 թվականի հունիսի 22-ի նիստում (արձանագրություն N 9) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում» կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 14-րդ կետի 10-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«10) համալսարանում որպես հիմնական 5 և ավելի տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ ունեցող աշխատողի երեխա ուսանողներին՝ 30 տոկոս.»:

2) ուժը կորցրած ճանաչել 14-րդ կետի 14-րդ ենթակետը:

3) 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«15. Համալսարանում ուսման վճարի մասնակի փոխհատուցման մասին դիմումներն ընդունվում են տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների սկզբին նախորդող և հաջորդող

երկու շաբաթների ընթացքում: Դիմումների քննարկումը կազմակերպում է համալսարանի մանդատային հանձնաժողովը:»:

4) 41-րդ կետի 1-3-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«41. Ներկայացված թեկնածուների՝

1) ուսման առաջադիմությունը գնահատվում է 8-10 միավորներով՝

ա. 8 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հնարավոր առավելագույն արժեքի 80%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 85%-ը,

բ. 9 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հնարավոր առավելագույն արժեքի 85%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 90%-ը,

գ. 10 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հնարավոր առավելագույն արժեքի 90%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 100%-ը.

2) գիտական աշխատանքներ կատարելու ունակությունը գնահատվում է 5-7 միավորներով՝

ա. 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր մասնակցել են ըստ ներկայացված ոլորտների՝ ներհամալսարանական գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) և ունեն պատվոգրեր, գովասանագրեր, դիպլոմներ,

բ. 6 միավորի կարող են հավակնել այն ուսանողները, ովքեր մասնակցել են ներկայացված ոլորտների՝ հանրապետական գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) և ունեն առնվազն երկու հրատարակված աշխատանքներ հանրապետական գիտական ամսագրերում,

գ. 7 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր մասնակցել են ներկայացված ոլորտների՝ միջազգային գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) և ունեն առնվազն երկու հրատարակված աշխատանքներ միջազգային գիտական ամսագրերում.

3) հասարակական ակտիվությունը գնահատվում է 3-5 միավորներով՝

ա. 3 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր ունեն ներֆակուլտետային հասարակական ակտիվություն,

բ. 4 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են ներֆակուլտետային ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում,

գ. 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են համալսարանական ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում:»:

2. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի օգոստոսի 15-ից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Ա. Հայրապետյան**

2019 թ. մարտի 7
Երևան